ՇՆՈՐՀԱՎԻՈՐԱԿԱՆՔ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ,ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՆ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Ձեր 60ամյակի օրը սրտագին շնորհավորանքներ եմ հղում Ձեզ, մաղթում խաղաղություն, քաջառողջություն եւ երկար տարիների կյանք:

Հայ Առաքելական եկեղեցու Քահանայապետի բարձր ու պատասխանատու պաշտոնում Ձեր ծառայության ժամանակ նրա հոգեւոր վերածնունդը լիակատար թափ ստացավ. ստեղծվում են նոր թեմեր, կառուցվում տաճարներ, կատարելագործվում է աստվածաբանական կրթության համակարգը, զարգանում են ընկերային եւ բարեգործական աշխատանքները: Ձեր Եկեղեցին այսօր ակնառու տեղ է զբաղեցնում համաշխարհային քրիստոնեական հանրության մեջ եւ գործուն մասնակցություն է ունենում միջկրոնական երկխոսությանը, վկայելով գրեթե երկու հազարամյակների ընթացքում ձեւավորված հարուստ եւ հնագույն ավանդության մասին:

Ուրախալի է, որ Դուք առանձնահատուկ ուշադրություն դարձրիք Առաքելական Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու փոխհարաբերություններին: Համոզված եմ, որ եղբայրական երկխոսությունը եւ բազմամյա փոխգործակցությունը այսուհետեւ եւս բեղմնավոր զարգացում կունենան՝ ծանրակշիռ ավանդ ներդնելով մեր ժողովուրդների բազմադարյան բարեկամության ամրապնդման գործում:

Աղոթաբար Ձեզ լիաբուռ օգնություն եմ ցանկանում Բարեգութ եւ Ամենազոր Տիրոջից: Թող Նրա Աջի օրհնությունը լինի Ձեր բազմամիլիոնանոց հոտի վրա Հայրենիքում եւ նրա սահմաններից դուրս:

Ձեզ բազում եւ բարելից տարիներ
Սիրով ի Քրիստոս՝

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ **ԿԻՐԻԼ**

21 օգոստ. 2011

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՆ

Ձերդ Սրբություն,

Ի սրտե շնորհավորում եմ Ձեր 60ամյակը: Ձեր քահանայապետական ծառայության ժամանակը նշանավորվեց Հայ Առաքելական Եկեղեցու իսկական ծաղկմամբ, փաճարների վերականգնմամբ եւ կառուցմամբ, լուսավորական եւ բարեգործական կարեւոր նախագծերի իրականացմամբ:

Դուք առանձնահատուկ ուշադրություն եք դարձնում միջեկեղեցական երկխոսության զարգացմանը, որը ծառայում է մեր երկու եղբայրական ժողովուրդների միջեւ բարեկամության եւ փոխըմբռնման ամրապնդմանը: Մեծ հարգանքի է արժանի նաեւ Ձեր աջակցությունը միջկրոնական եւ ազգամիջյան խաղաղությանը Կովկասում:

Ընդունեցեք քաջառողջության եւ Ձեր պատասխանատու ծառայության մեջ հաջողությունների իմ մաղթանքները:

Իմ շնորհավորանքներին է միանում նաեւ իմ տիկինը:

Դ. ՄԵԴՎԵԴԵՒ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

21 օգոստ. 2011

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ձերդ Սրբություն,

Ընդունեցեք սրտագին շնորհավորանքներս Ձեր 60ամյա հոբելյանի առթիվ:

Ձեր հովվապետական անխոնջ գործունեությունն ուղղված է մարդկանց համախմբմանը քրիստոնեական հավատի շուրջ, գթասիրության եւ արդարության իդեալների հաստատմանը, ողջ աշխարհի հայերի միասնության ամրապնդմանը:

Համոզված եմ, որ Ձեր իմաստնությամբ, հեղինակությամբ եւ ստեղծարար աշխատանքով Դուք այսուհետեւ եւս կաջակցեք մեր երկրների միջեւ բեղմնավոր գործակցության զարգացմանը ի շահ Բելոռուսի եւ Հայաստանի ժողովուրդների:

Ձերդ Սրբություն, Ձեզ անկեղծորեն ցանկանում եմ քաջառողջություն եւ անսպառ եռանդ հանուն բարու եւ արդարության Ձեր կարեւոր ծառայության մեջ:

Հարգանքով՝

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԼՈՒԿԱՇԵՆԿՈ
ԲԵԼՈՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Մինսկ, 21 օգոստոսի 2011 թ.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ ՏԵՐ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Վեհափառ Տեր,

Սրտի գոհունակությամբ եմ բերում իմ ողջույնի խոսքը Ձեր ծննդյան 60-րդ եւ գահակալության 12-րդ տարեդարձերի տոնակատարությանը: Տարակույս չունեմ, որ հավատավոր հայ ժողովուրդը՝ Հայաստան, Սփյուռք եւ Արցախ, այս նույն բարի կամեցողությունն ու ջերմ վերաբերմունքն ունի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ու քրիստոնեական դավանապետությանը նվիրյալ Հովվապետի անձի ու գործունեության հանդեպ:

Ինչպես 1976-ին՝ Ձեր անվանակոչության օրն ուխտեցիք **«...մնալ զամենայն աւուրս կենաց իմոց ապաստաւոր հաւատարիմ ու աւանդապահ Սրբոյ ի միոյ Առաքելական Եկեղեցւոյս Հայաստանեայց...»**, ցայսօր էլ, Ձեր այդ ուխտին հավատարիմ՝ շարունակում եք հավատավոր ժողովրդի մեջ տարածել ու ամրապնդել քրիստոնեկան հավատքի զորությունը: Սա շարու-

նակությունն է հոգեւոր եռանդով եւ պատասխանատվության գիտակցությամբ Արարատյան Հայրապետական թեմում 14-ամյա Ձեր եկեղեցաշեն նվիրական գործունեության, որի լուսապսակը եղավ նորանկախ Հայաստանում 1998 թվականին սկսված եւ Ձեր գահակալության տարիներին ավարտված «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Մայր եկեղեցին՝ ի նշանավորումն Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյա հոբելյանի: Հետայդու էլ Եկեղեցու, ժողովրդի ճակատագրով եւ հոգսերով մտահոգ Ձեր կյանքը լեցուն է եկեղեցական նոր կառույցների ստեղծումով: Վկայությունը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տարվող վիթխարի աշխատանքները, հավատքի նոր տների հայտնությունը հանրապետության տարբեր բնակավայրերում ու սփյուռքի հայաշատ վայրերում:

Դուք անմնացորդ նվիրումով եք փորձում հաղթահարել Հայ Եկեղեցու առջեւ ծառացած հիմնական դժվարությունը՝ դասնամյակներ շարունակ եկեղեցուց հարկադիր հեռու պահված մարդկանց համախմբել եկեղեցու շուրջ, վերացնել եկեղեցու եւ ժողովրդի միջեւ առաջացած անջրպետը, եկեղեցու համար պատրաստել երիտասարդ նոր հովիվներ:

Դուք հավատարիմ եք «**Մարդու կենսաձեւի առանցքն արարման հատկանիշն է**» սկզբունքին, «**...մտքի աննիրհ աչքով բոլորի վրա հսկելու, խոտորվածներին ուղղելու եւ ուղիղներին իրենց ճանապարհի մեջ հաստատուն պահելու**»՝ մեր սուրբ հայրերի պատգամին, եւ առաջնորդվելով աստվածային անանց արժեքաւությամբ, քրիստոնեական հավատքի զորությամբ ու անելիքի խոր գիտակցությամբ՝ շարունակում եք արժանապատվորեն անցնել ազգային ու համամարդկային, քրիստոնեական ու համակրոնական իմաստությամբ լեցուն ուղիով:

Վեհափառ Տեր, բարեմաղթանքս է, որ Ձեր աստվածահաճո առաքելությամբ, կորովով ու հավատքով շարունակեք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կենարար լույսը տարածել հավատավոր ժողովրդի բոլոր օջախներից ներս՝ ջերմացնելով հայացքով այլեւս դեպի եկեղեցին դարձած մարդու հոգին ու սիրտը՝ նրան դարձնելով մեր անկախ պետականության կերտման ու զորացման նվիրյալ եւ հավատավոր մասնակից:

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

1 նոյեմբերի, 2011 թ.

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

60-ամյա իր փարեղարձի առթիվ

ՕՐՀՆԻՐ, ՀԱՅՐԱՊԵՏ

Դառն են օրերը առանց հավատի,
առավել մութ են առանց աղոթքի.
օրհնիր, Հայրապետ, քո ժողովրդին,
օրհնիր, ու թող որ նա կանգնի ոտքի:

Հյուսել ենք դժգույն, աղոտ երազներ
ու փանուլ տվել ջանքերը մեր բյուր,
կարծում ենք՝ մի տեղ Մեկը մոռացել
ու թողել է մեզ մենության մեջ կույր:

Եւ տաճարները մեր հին աղոթքի
դառնացած էին մեր վազքը հսկում,
ու մռայլ մի կիրք՝ ոխի, բողոքի,
մարդկանց սրտերում դավեր էր երկնում:

Օրհնիր, Հայրապետ, քո ժողովրդին
եւ նրա ուղին լցրու քո սիրով,
օրհնիր, որ դառնանք հաղթական երթիդ
սահմանապահներն ու զինվորը նոր:

Քո վսեմ խոսքով պատրաստ ենք մարտի՝
զենքով հավատի, լույսով աղոթքի.
օրհնիր, Հայրապետ, քո ժողովրդին,
օրհնիր, ու թող որ նա կանգնի ոտքի:

Տ. ՆԵՐՍԵՍ ԱԲՂ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

«Հինն անց, եւ արդ նոր եղեւ ամենայն»
(Բ Կորնթ. Ե 17):

Պողոս առաքյալի այս պատգամը շեշտում է նորոգության անհրաժեշտությունը կյանքում: Պատմության ողջ ընթացքը, կարծես, անընդհատ հաստատում եւ հիշեցնում է մեզ առաքելական այս խոսքերը՝ թե հինը սահում, աներեւութանում է, եւ նորն է անմիջապես գալիս, ինչպես ամեն առավոտ ծագող արեւ: Հիրավի, քիչ չեն մեր դարավոր պատմության մեջ տեղ գտած արհավիրքները, ցավերը, որոնց ապաքինումն ու դարմանումն ամեն անգամ նոր էջ է բացում, նոր շունչ եւ ոգեւորություն տալիս հայ մարդուն: Այդ դառնությունների հորձանքն անհետեւանք չի անցել նաեւ Հայ Եկեղեցու համար: Բավական է միայն հետադարձ հայացք գցենք անցնող դարի պատմության իրադարձությունների վրա՝ պատկերացնելու համար, թե ինչ տեսակ փորձությունների միջով է անցել Հայ Եկեղեցին իր ժողովրդի հետ միասին: Այդ ամենից Հայ Եկեղեցին բնավ չընկրկեց, չընկճվեց, այլ մշտապես Աստծո զորակցությունը հայցելով՝ ապագայի գեղեցիկ հույսեր, նոր կյանքի արշալույսի պատկերներ ստեղծեց: Այդպիսի մի հիանալի հույսի շողերով է պարուրված մի հուզումնալից եւ սրտաշարժ դեպք, որը ներկայացնում է Գեւորգ Ե. Սուրենյանց Կաթողիկոսի՝ 1917 թվականին օդափոխության նպատակով դեպի Արաքս գետի ափը կատարած փոքրիկ ուղեւորությունը: Վեհափառին ուղեկցող խումբը հասնելով Արաքս գետի ափին ընկած Մարգարա գյուղը՝ իջավ կառքից եւ գնաց գետափնյա պարտեզը: Կաթողիկոսը ցանկանում էր հանգստանալ այդ պարտեզում: Պարզ, խաղաղ շրջապատը, սպասավորող գյուղացի ընտանիքի սիրալիր հարգանքներով լի պատրաստակամությունը եւ այն հպարտ ներքին զգացումը, որ Ամենայն Հայոց Հայրապետն իրենց պարզունակ հարկի տակ է իջել, հետզհետե հեռացրին Հայրապետի թախիծն ու մտահոգ վիճակը, որը տարիներից ի վեր Հայի ճակատագրի ու բախտի հարվածները դրոշմել էին Նրա վրա, եւ այդ վայրում բացվեցին Նրա սիրտն ու հոգին: Նախաճաշի ժամանակ Սրբազան Հայրապետն այսպես բացատրեց իր այս ուղեւորության շարժառիթը. «Ուղիղ 45 տարի սորանից առաջ,

յունիս 6-ին, երջանկայիշատակ Գէորգ Դ. Կաթուղիկոսի հրամանով գնալով Իգդիր՝ տեղական ազգային երկսեռ դպրոցների տարեկան հարցաքննութիւններին ներկայ լինելու, առաջին անգամ տեսայ պատմական Երասխը: Գետը յորձանուտ, ներկայիս փառահեղ կամուրջը դեռեւս գոյութիւն չունէր, ստիպուած էինք խախուտ լաստով անցնել միւս կողմը, կապարեցի վրաս դրուած պարտիքը, ուրախութեամբ եւ սիրով, ինչպէս միշտ, կեանքիս ընթացքում: Վերադարձին, դառնալով դէպի հայրենի յիշատակների լուռ վկայ գետը, մտովի հրաժեշտ տուի՝ ասելով. «Արաքս, ե՞րբ եւ ի՞նչ հանգամանքների մէջ պիտի կրկին տեսնուինք, բարեբա՞խտ թե՞ աւելի ծանր»: Այժմ, կեանքիս արեւմուտքին, ծերունի Հայրապետս, փափագեցայ այսքան տարիների անջատումից յետոյ կրկին տեսնել իմ Հայրենի սրբազան գետը եւ պատգամ հարցնել նորանից, Հայի դառնութիւնն ու արցունքը լուացող, սպիտակափառ Մասիսի փեշերը լիզող Արաքսից մի քանի կաթիլ զովարար ջրով ամոքել սիրտս ու հոգիս, միտքս ու ամբողջ էութիւնս պատող վշտերն ու հոգսերը եւ հոգով հանգստանալ, գոնէ մի քանի րոպէ»:

Ամբողջովին հուզված ծերունազարդ Հայրապետը ոտքի ելաւ իր նստած տեղից, մենակ մոտեցաւ Արաքսի ափին, մնաց մի քանի րոպե լուռ՝ ակնապիշ հայացքն ուղղած Արաքսին, եւ նոյն խոհուն դեմքով վերադարձաւ իր տեղը:

«Գիտէք,- ասաց Նա,- Մայր Արաքսը պատասխանեց իմ՝ նորան ուղղած հարցերիս. յայտնեց իւր պատգամը, սակայն, առայժմ, վաղաժամ է յայտնել այդ, ժամանակը կգայ դորան...»[1]:

Մայր գետի կողմից Գեւորգ Ե Վեհափառին հայտնված լաւատեսական պատգամները, ցաւոք սրտի, չիրականացան նրա կենդանության օրոք: Նա տեսաւ Եղեռն, տեսաւ Սարդարապատ, Հայաստանի Հանրապետության անկում, խորհրդային իշխանությունների կողմից իրագործված բռնություն եւ հալածանք Եկեղեցու նկատմամբ: Արդարեւ, մեծ ցաւեր ու տառապանքներ կրեց իր կյանքում Գեւորգ Կաթողիկոսը, որ իր նամակների ու կոնդակների վերջում մշտապես իրեն կոչում էր «Գեւորգ Վշտալի Կաթողիկոս»: Սակայն Երասխի պատգամը հօդս չցնդեց, այլ կյանքի կոչվեց: Եւ այսօր վստահաբար կարող ենք ասել, որ եկել է ժամանակը, հայ ազգը եւ եկեղեցին թոթափել են իրենց հին ցաւերը, դարմանել՝ իրենց արնաքամ վերքերը: Այժմ երկնքում մեծ ուրախություն եւ բերկրանք է ապրում հայոց վշտալի Կաթողիկոսի զվարթուն հոգին՝ տեսնելով Հայ Եկեղեցու զորացումը եւ պայծառացումը: Թերեւս մեր ժամանակներին է ուղղված Մայր Արաքսի պատգամը, այսօրվա

1 «Արարատ», 1917, էջ 460-463:

Հայոց Կաթողիկոսին է Աստվածային նախախնամությունը հնարավորություն ընձեռել արարելու եւ կերտելու իր նախորդների փափագածը: Ներկայիս աստվածընտիր իրավահաջորդի՝ Գարեգին Բ. Հայրապետի անձաձիր եւ քաջարթուն գործունեությունը նոր ուժ եւ կորով է հաղորդում Հայ Եկեղեցու հզորացմանն ու արդյունավորմանը: Իսկապես երջանիկ օրեր ենք ապրում, քանզի հոգու հրճվանքով ականատես ենք լինում հայոց հավատքի վերազարթոնքին, հոգեւոր կյանքի հարությանը «ի մեռելութենէ»: Ամենուրեք տեսնում ենք նոր եկեղեցիների վեր խոյացում կամ հնի վերակառուցում, որոնք կենդանի վկաներն են Հայոց Վեհափառի հոգատար գործունեության:

Տ. ՎԱՉԵ ԱԲԵՂԱ ՄԿՐՏՉՅԱՆ